# Նախապատրաստվեք քվեարկությանը բարեհաջող մասնակցությանը:

Ահա մի քանի կարևոր խորհուրդ, որոնք պետք է հաշվի առնեք նախքան ընտրության գնալը, և որոնց միջոցով կապահովեք բարեհաջող մասնակցություն քվեարկությանը: Հաջորդ երեք էջերում կարող եք գրել քվեարկությանը մասնակցելու ձեր անձնական որոշման մասին: Դուք կարող ձեր որոշման մասին հայտնել այն անձանց, ովքեր աջակցում են ձեզ, բայց դա պարտադիր չէ:

Հարցերի դեպքում կարող եք կապվել ձեր շրջանի ընտրությունների գրասենյակ կամ զանգահարել Հաշմանդամություն ունեցողների իրավունքների /Կալիֆորնիա/ թեժ գիծ՝ (888) 569-7955 հեռախոսահամարով:

**Ընտրողների գրանցում**. Քվեարկելու համար պետք է գրանցվեք:

- Դուք գրանցվա՞ծ եք քվեարկության համար:
- Արդյո՞ք ձեր անունը և հասցեն թարմացված են ընտրացուցակներում:
- Եթե դուք հաշմանդամություն ունեցող անձի խնամակալ եք, դատարանը որոշում կայացրե՞լ է այն մասին, որ ձեզ չի թույլատրվում քվեարկել:

**Փոստով քվեարկություն**. Քվեաթերթիկները կուղարկվեն բոլոր գրանցված ընտրողներին:

- Ցանկանու՞մ եք քվեարկել փոստով:
- Արդյո՞ք կարող եք լրացնել և/կամ գործածել թղթային քվեաթերթիկը:
- Արդյո՞ք ձեզ անհրաժեշտ են ձեր քվեարկության նյութերը այլ ձևաչափերով:
- Եթե ցանկանում եք կիրառել հեռավար՝ փոստով քվեարկության (RAVBM) համակարգը, ունե՞ք արդյոք ձեզ անհրաժեշտ տեխնոլոգիա:
- Դուք կարո՞ղ եք ստորագրել: Եթե ոչ, տեղեկացվա՞ծ եք ձեր տարբերակների մասին:

- Կարո՞ղ եք ժամանակին վերադարձնել ձեր լրացված քվեաթերթիկը փոստով, քվեատուփի մեջ գցելով կամ անձամբ ներկայացնելով ընտրատեղամաս:
- Քվեարկության հետ կապված որևէ աջակցության կարիք ունե՞ք: Եթե այո, ապա ո՞վ կօգնի ձեզ, ինչպե՞ս և ե՞րբ: Դուք ունե՞ք այլընտրանքային տարբերակ:

**<u>Անձամբ քվեարկություն</u>**. Չնայած քվեաթերթիկները կուղարկվեն փոստով, դուք դեռևս կարող եք անձամբ քվեարկել:

- Ձեզ անհրաժե՞շտ է (կամ նախընտրո՞ւմ եք) անձամբ քվեարկել:
- Ո՞րտեղ է գտնվում ընտրատեղամասը, որտեղ պատրաստվում եք քվեարկել:
- Ո՞ր օր(եր)ին և ժամերին է բաց ընտրատեղամասը:
- Դուք ունե՞ք ընտրատեղամաս հասնելու միջոց:
- Գիտե՞ք այնտեղ առկա քվեարկության տարբերակների մասին:
- Քվեարկության հետ կապված որևէ օգնության կարիք ունե՞ք: Եթե այո, կա՞ն մեկ կամ երկու հոգի, ում կցանկանայիք խնդրել ձեզ հետ գնալ ընտրատեղամաս: Նրանք կարո՞ղ են օգնել:

# **Իմ քվեարկության պլանը** Ընտրությունների օր. _______________

Հրահանգներ. Նշեք այն վանդակները, որոնք վերաբերում են ձեզ: Եթե ունեք հարցեր, կարող եք կապվել ձեր շրջանի ընտրությունների գրասենյակ, կարող եք զանգահարել Հաշմանդամություն ունեցողների իրավունքների /Կալիֆորնիա/ թեժ գիծ (888) 569-7955 հեռախոսահամարով, կամ կարող եք դիմել այլ անձի օգնության նպատակով, ում դուք վստահում եք: Նախապես որոշելը կօգնի ձեզ տեսնել ձեր պլանում առկա բոլոր բացերը և դրանք շտկել մինչև ընտրությունների օրը:

## Ընտրողների գրանցում

☐ Ես գրանցված ընտրող եմ:
Իմ անունը և հասցեն ներառված են ☐ իմ վարչաշրջանի ընտրական գրասենյակում:
☐ Ես դեռևս գրանցված չեմ քվեարկությանը մասնակցելու համար, բայց գիտեմ, թե ինչ քայլեր են պետք ձեռնարկել գրանցվելու համար:
☐ Ես դեռևս գրանցված չեմ քվեարկությանը մասնակցելու համար, և դրա համար ինձ հարկավոր է օգնություն:

## Փոստով ինուղարկված քվեաթերթիկով քվեարկելը

☐ Ես պլանավորում եմ քվեարկել քվեաթերթիկով, որը փոստով ուղարկվել է ինձ:
☐ Ես կարող եմ լրացնել փոստով ինձ ուղարկվող թղթային քվեաթերթիկը:
☐ Ինձ անհրաժեշտ են իմ քվեարկության նյութերը մեկ կամ մի քանի տարբեր ձևաչափերով:

☐ Ստորև բերված ձևաչափ(եր)ը ես խնդրել եմ իմ վարչաշրջանի ընտրական գրասենյակից:
☐ Ստորև բերված ձևաչափ(եր)ը ես խնդրել եմ Կալիֆորնիայի պետքարտուղարից:

Ձևաչափ(եր): ☐ Լայնաֆորմատ տպագրություն ☐ Աուդիո ☐ Բրայլ ☐ PDF

☐ Ես պատրաստվում եմ կիրառել իմ վարչաշրջանի հեռավար՝ փոստով քվեարկության (RAVBM) համակարգը՝ իմ քվեաթերթիկը էլեկտրոնային սարքի միջոցով լրացնելու համար:

☐ Ինձ հասանելի է RAVBM-ն օգտագործելու համար անհրաժեշտ ամբողջ տեխնիկան:
  ☐ Համակարգիչ կամ սմարթֆոն ինտերնետ հասանելիությամբ
  ☐ Տպիչ, որը միացված է համակարգչին կամ սմարթֆոնին
☐ Ես կարողանում եմ կարդալ և գործածել թղթային RAVBM քվեաթերթիկը տպելուց հետո:
☐ Ես գրանցվել եմ՝ օգտագործելու իմ շրջանի RAVBM համակարգը:
☐ Ես ուսումնասիրել եմ RAVBM-ի կիրառումը վերջինս ցուցադրող կայքի միջոցով:

☐ Ես գիտեմ, թե ինչպես պետք է ստորագրեմ քվեարկության ծրարը (ընտրեք նշվածներից մեկը):
  ☐ Ես կարող եմ ստորագրել, և իմ ստորագրությունը պետք է համապատասխանի այն ստորագրությանը, որը պահվում է վարչաշրջանի ընտրական գրասենյակում:
  ☐ Ես չեմ կարող ստորագրել, ուստի իմ անվան փոխարեն կդնեմ նշան, օրինակ՝ X, և կխնդրեմ որևէ մեկին ստորագրել ծրարի վրա՝ որպես վկա:
  ☐ Ես կօգտագործեմ ստորագրության՝ իմ կողմից նախապես գրանցված դրոշմակնիքը:

☐ Ես պատրաստվում եմ վերադարձնել իմ լրացված քվեաթերթիկը հետևյալ կերպ.
  ☐ Փոստով (կնքված ընտրության օրը կամ դրանից առաջ փոստային կնիքով)
  ☐ Քվեատուփի մեջ գցելով (քվեարկության օրը ոչ ուշ, քան մինչև ժամը 20:00)

    Քվեատուփի գտնվելու վայրը՝

    ________________________________________
  ☐ Ընտրատեղամասում (քվեարկության օրը ոչ ուշ, քան մինչև ժամը 20:00)
    Ընտրատեղամասի գտնվելու վայրը՝

    ___________________________________________________

## **Ընտրատեղամասում անամբ քվեարկելը**

☐ Ես պլանավորում եմ անձամբ քվեարկել ընտրատեղամասում:
☐ Ես պատրաստվում եմ քվեարկել այս ընտրատեղամասում.

______________________________________

☐ Վաղաժամ անձամբ քվեարկությունը (նախքան ընտրությունների օրը) հասանելի է այստեղ՝
☐ Ես պատրաստվում եմ քվեարկել հետևյալ օրը.

____________________________________________________

☐ Ընտրատեղամասը բաց կլինի հետևյալ ժամերին՝

_____________________

☐ Ես պատրաստվում եմ ներկայանալ ընտրատեղամաս հետևյալ կերպ՝

________________________________________________________________

☐ Ես հաշվի եմ առել ֆիզիկապես ընտրատեղամաս ներկայանալու վերաբերյալ ցանկացած մտահոգություն:
☐ Ես ուզում եմ քվեարկել դրսում:
- ☐ Ես հաստատել եմ, որ դա հասանելի է իմ ընտրատեղամասում:
- ☐ Ես գիտեմ, թե ինչպես պետք է ընտրությունների անցկացմամբ զբաղվող աշխատակցին կանչեմ իմ մեքենայի մոտ, երբ ժամանեմ:

☐ Ես պատրաստվում եմ օգտագործել հետևյալ իրերը, որոնք կօգնեն ինձ անձամբ քվեարկելու.
- ☐ Ավտոմատ քվեարկության մեքենա (կոչվում է նաև քվեաթերթիկները լրացնող սարք), մասնավորապես հետևյալ իրերը/գործողությունները.
  - ☐ Սենսորային էկրան
  - ☐ Ձայնային համակարգ, որը կարդում է էկրանին առկա տեքստը և տալիս հրահանգներ
  - ☐ Մեծացնել էկրանին առկա տեքստը
  - ☐ Փոխել էկրանի գունային հակադրությունը
  - ☐ Հոսանքի մուտքի-ելքի կետ՝ օդը ներշնչելու և արտաշնչելու միջոցով առանց ձեռքի հսկողության քվեարկության սարքը կամ շարժական անջատիչ սարքը միացնելու համար
- ☐ Լեզվական օգնություն (կ  արող է ներառել ժեստերի ամերիկյան լեզուն (American Sign Language) [ASL])
  - ☐ Ես գիտեմ, թե իմ ընտրատեղամասում լեզվական ինչ օգնություն
  - ☐ Գնդիկավոր գրիչ (գրիչը հեշտությամբ բռնելու համար)
- ☐ Խոշորացույց կամ ապակի
- ☐ Գնդիկավոր գրիչ (գրիչը հեշտությամբ բռնելու համար)
- ☐ Ստորագրության ուղեցույց (որը կօգնի ինձ ստորագրել ճիշտ տեղում)

☐ Հետևյալ անձը/անձինք ինձ հետ կգնա/կգնան ընտրատեղամաս.
1. ________________________________________________
2. ________________________________________________

**<u>Աջակցություն քվեարկելու ժամանակ</u>**

<u>Հրահանգներ</u>. Դուք կարող եք օգտագործել այս էջը՝ ձեր նախապատրաստական գործընթացից այլ նշումներ գրանցելու համար: Ի՞նչ օգնություն է ձեզ հարկավոր կամ ինչի՞ կարիք ունեք, որպեսզի կարողանաք բարեհաջող քվեարկել: Մտածեք քվեարկության գործընթացի մասին սկզբից մինչև վերջ՝ քվեարկությանը մասնակցելու համար գրանցվելուց, քվեաթերթիկի պարունակության մասին իրազեկվելուց մինչև ձեր քվեն տալը:

☐ Ինձ անհրաժեշտ է օգնություն քվեարկության հետ կապված հետևյալ գործողությունները կատարելիս.

☐ Հետևյալ անձը/անձինք տվել են համաձայնություն օգնել ինձ.

☐ Ստորև նշում եմ մանրամասները, թե ինչպես և երբ կստանամ օգնությունը.

☐ Եթե վերը նշված քայլերը չաշխատեն, ես կանեմ հետևյալը.